

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԱՊԵՏ ԵԱՂՈՒԲԵԱՆ, ՀԱՅԵՐԵՆ-ՈՌԻՍԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ. Թիֆլիս,
տպ. Յ. Մարտիրոսեանցի 1891 (թ. 1):

Այն ուշագրութիւնը, որին արժանացաւ այդ բառարանը, ինքն ըստ ինքեան մի լաւ ապացոյց է՝ թէ ինչ կարօտութիւն է զգում և ինչպիսի անհամբերութեամբ է սպասում մեր հասարակութիւնը մի այդպիսի գրքի, ի՞նչ տեսնելուն պէս այդ բառարանը խօսակցութեան նիւթ դառաւ թէ մասնաւոր շրջաններում և թէ պարբերական թերթերում. գրախօսեցին այն ոչ միայն մեր թերթերը, այլ և ռուսերէն տպագրովոյ թերթերից, գոնեաւս գիտեմ՝ մինը, Այդ բոլոր գրախօսութիւններից ամենաճիշտը և ամենաանաչառը ես համարում եմ այն, որը լոյս է տեսել բառարանի հետ միասին. այդ պ. Նաղուբեանի իրաջ Յառաջարանն է. Ահա ինչ է ասում պ. Նաղուբեանը ինքը իւր աշխատութեան մասին. «Չը գիտեմ ով՝ ասել է, թէ կատարեալ բառարան միմիայն Աստուած կարող է կազմել. բայց ապտեղ կատարելութեան մօտիկ անդամ խօսք չէ կարող լինել, Ով ծանօթ է բառարանագրութեան, նա գիտէ, որ անկարելի է երկու տարուայ ընթացքում որ և է լրիւ, թէգուց 2) ամենաթեթեւ բառարան կազմել. մանաւանդ որ ես չէի կարող իմ բոլոր ժամանակս նուիրել, թողնելով իմ հերթական այլ պարտւածքներս»։ Չը գիտեմ ով՝ ասել է թէ՝ մի որ և է աշխատութեան առաջին քննադատը, գուցէ ամենախիստը, ինքը հեղինակն է լինում. և այդ հատաստում է պ. Նաղուբեանը, որը ոչ թէ քննադատում է, այլ ուղղակի դատապարտում է իւր աշխատութիւնը, ինքը խոստովանելով թէ՝ «ապտեղ կատարելութեան մօտիկ անդամ խօսք չէ կարող լինել» և պատճառաբան-

1) Հրատարակում ենք այս լօղւածը ի նկատի օճննալով հալ բառարանագրութեան շահը, որով միայն կարելի է արդարացնել այս գրախօսական լօղւածի անստոր մեծութիւնը, Պահպանում ենք նաև հեղինակի միայն իրան լատուկ ուղղագրութիւնը, որի մասին մեր նկատողութիւնը կ'անենք իւր տեղում.

2) Բնագրից բերած կտորները ես արտագրում եմ բնագրի ուղղագրութեամբ:

նեղով ալդ՝ թէ նա չէր կարող իւր բոլոր ժամանակը նվիրել (ալդ գործին), թողնելով իւր հերթական այլ պարապմունքները: Մի քիչ վտույ պ. Եւդուբեանը իւր բառարանի ներքին արժանաւորութիւն ունենալը կտակածոմ է, ասելով՝ «սակա՛ն որքան ալդ աշխատակցութիւնները նպաստել են բառարանիս ներքին արժանաւորութիւնը—եթէ միա՛ն ունի—բարձրացնելուն, արեւմտ իմ աշխատակիցները հեռու են պակասաւոր կողմերի պատասխանատուութիւնից»: Մի քանի տողից վտույ պ. Եւդուբեանը մի այլ ճշմարտութիւն է խոստովանում. «Եւ ինքս էլ լաւ գիտեմ, ասում է նա, որ բառարանս ունի բազմաթիւ պակասաւոր կողմեր, Դորանցից գուցէ գլխաւորը արն է, որ, թէպէտ բառերի քանակութիւնը 30,000-ից էլ անց է, արեւմտեանաշիւ իւր տեսակին լրիւ չէ կարող համարուել, որքան ինձ ցանկալի էր: Շատ կարելի է, որ բազմաթիւ բառեր, որոնք պիտի լինէին ալդ բառարանում, դուրս թողւած են: Ձեռքի տակ եղած, պատրաստի նիւթից, որքան հնարաւոր էր, օգուտ քաղեցի: Սակա՛ն դա բաւական չէ: Հալերէն աշխարհաբար բառարան լորինողը պէտք է ինքը ևս նիւթ ժողովէ: Մենք չունենք ոչ մի հալերէն բառարան, որի բառերի քանակութիւնը (նամենկատուրը) քիչ շատ լրիւ լինի: Պէտք է նորից և ինքնուրոյն կազմէի, ահա նոր բառարան կազմելու դժուարութիւններից մէկը: Բացի ալդ պէտք է օգուտ քաղել զաւառական բարբառներից, որ դեռ մշակուած, անգամ գրի անցրած չեն. պէտք է օգուտ քաղել նորակազմ բառերից, որ ամենայն օր գրեթէ կազմուում են... իսկ ալդ բոլորը առնուազն պահանջում են ¹⁾ ժամանակ: Մեռում է միայն զարմանալ, որ պ. Եւդուբեանը, ինքը իւր գործը այս աստիճան անխնայ դատապարտելով, ինքը խոստովանելով թէ իւր բառարանը ոչ միայն կատարեալ չէ այլ և նորա «կատարելութեան մօտիկ անգամ խօսք չէ կարող լինել ²⁾, ինքը կասկածելով իւր բառարանի ներքին արժանաւորութիւնները, լաւ իմանալով որ իւր բառարանը բազմաթիւ պակասաւոր կողմեր ունի, որ բազմաթիւ բառեր, որոնք պիտի լինէին այս բառարանում, դուրս թողված են,—արեւմտեանաշիւ տպագրում է իւր աշխատութիւնը, որ սպասող հասարակութեան ձեռք տալ մի բառարան, որ «ունի շատ պակասաւոր կողմեր» և որի մէջ «բազմաթիւ բառեր դուրս թողուած են» և բացականչում էլ է թէ՛ feci, quod potui. արեւր թնշ fecisti, պարոն, քանի որ դուք ինքներդ զգում էք և չափում էք որ ձեր գործը թերի է և պակասաւոր և որ դուք ժամանակ չէք ունեցել մասնաւորապէս և ինչպէս հարկն է ալդ գործով պարապելու:

¹⁾ Այսինքն՝ պահանջում է:

²⁾ Ուզում է ասել՝ կատարելութեան մօտիկ լինելու մասին անգամ խօսք չէ կարող լինել:

Բայց դուք է պ. Նաղդուբեանի խոստովանութիւնը ինքնադատապարտութիւն չէ՝ այլ մի տեսակ համեստութիւն, ասենք՝ հեղինակական համեստութիւն. ալո, ալդ ալդպէս կը լինէր, եթէ պ. Նաղդուբեանի գործը՝ բառարանը՝ ինքը չը գար հաստատելու իւր հեղինակի ասածները թէ՛ «բառարանս ոչնի բազմաթիւ պակասաւոր կողմեր» և թէ՛ «բազմաթիւ բառեր, որոնք պիտի լինէին այս բառարանում, դուրս թողուած են»։ Այս վերջին խօսքերը հաստատելու համար դիմենք թէ՛ կողմ հէնց առաջին երեք տառերին. ալստեղ տեսնում ենք բացակայ, օրինակի համար, հետեւեալ բառերը.

Ա.

աղապ
աղատածին
աղատարեր
աղղակցական
աղղակցաբար
աղղապետ
ալ
ալ (ալք)
ալսր (ախիր)
ախտարեր
ախտաբոժ
ախտահալած
ակնապիշ
ածխալահառ
ականակուռ
ականաւոր
ականջաւոր
ամբարիշտ
ամննօրեալ
ամթանք
ալգ
ալս (ՃՅՇԵ)
ալսահար
ալսահալած
անաղել
անբաւ
անդուլ
անկշտում
անլղկիլի
աննկատ

անսողիւտ

անսէրունչ
աշուղ
աչքալուս
աչքալուսանք
աչքակապուկ
առ (նախդիր)
առք
աստանդական
արածացնել
արանք ¹⁾
արար (արար աշխարհ)
արաղ
ապաղրանք
արեգ
արհառ
արժենալ
արիւնախանձ
արիւնկալել
արշին
արտասուածք
արտասուակալել
արտացոցել
արտացոլում (ն)
արքալաղալմ
աւազակախումբ
աւաղել
աւանակ (լաւանակ)
աւել (=առաւել)
աւետէք ²⁾
աքլոր

Բ.

բաղնիք (կամ բաղնիս)
բասարանք
բարակ (ГОУВАЯ)
բարդ (СТОГЪ)
բարկացկոտ
բարձել
բարձած
բարձունք
բարձրաբերձ
բացալալտեալ
բացի
բաւ
բաւարար
բաւարարութիւն
բեկուն
բեկունութիւն
բեռնել
բթամիտ
բիւր
բլրակ
բլրոտ
բնաղդարար
բնաղդօրէն
բնորոշ ³⁾
բոկոտն
բող

Գ.

գաղ (արշին)
գաղանական

¹⁾ Ոչ ալն մտքով, ինչ մտքով որ բերած է բառարանում.

²⁾ Համեմատել՝ բանողէք, կրողէք, միջնորդ չէք.

³⁾ Բառարանումը կալ բնառօրոշ, որ և սխալ է և աւելի քիչ գործածական.

դադանակերպ
 դահալէժ
 դամել (դամ—մելս)
 դավթակդանք
 դավթել
 դալիսոն
 դալլախազ
 դդակ ¹⁾
 դեղադարդութիւն
 դեղանի
 դեղաշուք
 դեղապաճոճ
 դեղապանծ (ձ)
 դեղեցկաբան
 դեղեցկաբանութիւն
 դեղեցկաբարբառ
 դեղեցկադիր
 դեղեցկանիստ
 դեղեցկահիւս
 դեղեցկավառ
 դեղեցկատես
 դետնաթաւալ
 դերադասել
 դերադասելի
 դերադասութիւն
 դերապանծ (ձ)
 դզգզել
 դզրոց
 դժտութիւն
 դինդ (և գինտ)
 դինեճան
 դինեճանութիւն
 դինեբեր

դինեւէր
 դինեւտուն
 դինեւէտ
 դիշերազնաց
 դիշերախառն
 դիշերակերպ
 դիշերանալ
 դիշերահաւասար
 դիշերալն
 դիտակցել
 դէս
 դէրուց (գիրուց)
 դիտակ
 դիւղակ
 դլխահան
 դլխել
 դլխատառ
 դլխացաւանք
 դնդակակերպ
 դնդակաձև
 գոհունակ
 գողուն
 գողունի
 գողոն (և գողոնք)
 գողնովի
 գոռ
 գով (և գովք)
 գործադիր
 գործակատար
 գործառնութիւն
 գործասէր
 գործասիրութիւն
 գործատեսաց

գործող
 գործողութիւն
 գորովագին
 գորովալիր
 գորովալից
 գորովախառն
 գորովում (ն)
 գութան
 գութաբեր
 գութատու
 գութկան
 գունագեղ
 գուսան
 գնդչալ
 գռեկկանալ
 գտնել
 գրախօսութիւն
 գրախօսական
 գրատախտակ
 գրարար
 գրբաց
 գրկատարած
 գրկածութիւն
 գրկանք
 գրոհ
 գրոհ տալ
 գրոհել
 գրող (գրողը տանէ)
 գրովանքա
 գօս
 գօսանալ
 գօսութիւն

Սա չեմ ուզում պարծենալ ըրոր պական բառերը լրացրած լինել. դորա համար կը հարկաւորվէր աւելի ժամանակ, քան թէ ինչքան գործ է ածել պ. Սաղուբեանը իւր ամբողջ բառարանը կազմելու համար. նոյն խնկ ակդ պատճառով չենք խօսում մնացեալ տառերի բառարանի մասին. բայց որ ընթերցողը չը կարծէ թէ միւս տառերի տակ բաց թողած բառեր չը կան, կարող ենք մի քանի օրինակներ բերել գէսից-դէնից. հէնց, օրինակ, գէս, գէն, գէսից-գէնից, գէս ու գէնից խօսքերը ընթերցողը չի գտնիլ ինչպէս և չի գտնիլ հէնց բառը. ուրիշ օրինակներ՝ թէկուզ ²⁾ առնուազն,

¹⁾ Կալ Գ-ով՝ գտակ. Գ-ով նախադասելի է:

²⁾ Գրելու է թէկուզ և ոչ թէկուզ (ինչպէս որ գրում է պ. Սա-

դրո՞ւնք, էգուց, ինչի (կամ ինչո՞ւ), խանդավառ, ծիծեռ, հէշ, հէքաթ, հետաքրքրելի, մատղահաս, միխ, մղեղ ¹⁾, ելնել, խտիտ, հրէշաւոր, նախշ, շահի (5 կող.) ասկելար, որմնադիր, սազ, սազել, սակարկել, սրտաբաց, սրտաճաք, վերկենալ, վէր (=վար), տեղալ, քուրք և ալն, և ալն:

Ապալէս ուրեմն պ. Նաղուբանի խոստովանութիւնը թէ «բազմաթիւ բառեր դուրս թողուած են» հաստատուում է, ալդ, եթէ պատիւ է բերում հեղինակի անկեղծութեանը և բարեխղճութեանը, պատիւ է բերում անշուշտ նորա բառարանին:

Բառարանի ալդ պակասութիւնը, որը, ինչպէս ասում է հեղինակը, «գլխաւորն է գտցէ», բաց միակը չէ. հեղինակը լաւ գիտէ «որ իւր բառարանը ունի բազմաթիւ պակասաւոր կողմեր», Նա թէ և չէ ասում որոնք են ալդ պակասաւոր կողմերը, բաց մենք իրաւունք ունինք նոցա շարքում դնել ալն դաւառաբանութիւնները, որոնք գտցէ միայն Ախալցխայի բարբառին չատուկ լինելով, տեղ են դրել մի բառարանում, որը՝ իւր վերնադրին նախած, ընդհանուր հայերէնը պիտի պարունակէր, իսկ ասացի՝ գտցէ միայն Ախալցխայի բարբառին չատուկ, բաց որովհետեւ Ախալցխայի բարբառը Տաճկա-Հայաստանի բարբառներից մէկն է, ուրեմն ալդ բառերը կարող են չատուկ լինել արեւմտեան ուրիշ բարբառներից էլ. ահաւ ամենայնիւ ալդ իրաւունք չէ ասլիս ալդ բառերին մտնել մի ընդհանուր լեզվի բառարանի մէջ, որի գլխաւոր հիմքը արեւելեան գրականականն է ըստ երեւութին և արեւելեան բարբառները պիտի լինէին, եթէ հարկաւոր լինէր, իսկ առհասարակ բարբառներից օգտւած աղելը բառարանի համար ալնքան հեշտ չէ, ինչքան թվում է, իմ կարծիքով՝ բարբառներից մի որ և բառ հանելու և ընդհանուր բառարանի մէջ մտցնելու համար հարկաւոր է նախ և առաջ նոյն բառը որոնել ըստ բարբառներում, գոնեա գլխաւոր բարբառներում. եթէ ալդ բառը գտնվեցաւ նոցա մէջ, կամ գոնեա նոցա մեծամասնութեան մէջ, ալն ժամանակ կարելի է դնել բառարանի մէջ, տալով ալդ բառին գլխաւոր բարբառի գոյնը և արտասանութիւնը (զորօրինակ արեւելեան հայերէնում—արաբատեան բարբառի արտաքինը). կամ թէ գիցուք մեզ պակասում է մի բառ մեր գրականական լեզվում. մեզ չալտի չէ և չենք գտնում գրաբառի բառարաններում անգամ, որոնում ենք բարբառներում և ալնտեղ էլ միայն մինի մէջ ենք գտնում. կարող ենք, եթէ անպատճառ ալդ բառը մեզ հարկաւոր է ունենալ և՛ անպատճառ հայերէն, կարող ենք հանել ալդ բարբառից և դնել ընդհանուր բառարանում, ալն էլ՝ կողքին նշանակելով

դուրեանք), որովհետեւ կազմած է հետեւեալ երեք բառերից՝ թէ+լը+ուզ (իս)=թէ կ'ուզ և ապա=թէկուզ:

¹⁾ «Ալ ինչպէս դարմանի մղեղ, որ քամին ցրիւ է տալիս» (գիրք Սաղմոսաց, աշխարհ. թարգմ. Բրիտ. ընկեր. 1879 թ. եր. 1).

Թէ աս ինչ բարբառից է աս բառը: Ահա թէ ինչ տեսակ պիտի օգտվի բառարան կազմողը մեր բարբառներից. իսկ արդ գիտե՞ք ուր կը տանէր. արդ կը տանէր կը հասցնէր մեզ զգալու արն ահագին պակասը, որ կա մեր հալկական լեզվադիտութեան մէջ. արդ պակասն է մեր բարբառների համեմատական բառարան չ'ունենալը: Այդպիսի մի բառարան մի դործ կը լինէր, որ մեծ ծառալուծիւն կը մատուցանէր մեր նոր լեզվի շինելուն և իտականելուն. բաց դա ծանր դործ է և չամենայն դէպս մի մարդու դործ չէ: Այդպիսի մի բառարան կարելի է կազմել միայն արն ժամանակ երբ մենք կ'ունենանք հաւաքած և տպած հարուստ նիւթեր, երգեր, աւանդութիւններ, հէքաթներ և արն զանազան բարբառներով և մի և նոյն ժամանակը ամեն մի բարբառով զրկածը պիտի ունենալ իւր բառարանը և մի կարճառօտ քերականութիւն (հնչիւնների և ձևերի առանձնապատկութիւնները). ցանկալի կը լինէր, զորօրինակ, որ Գ. Սրումանձտեանը տար մեզ մի բառարան իւր բոլոր գրկածքների (Մանանայ, Գրոց-Բրոց, Համով-հոտով և արն), աւելացնելով արնպիսի տեղական բառեր, որոնք նորա ժողովածոների մէջ չեն մտել. ցանկալի կը լինէր որ նոյնը անէր և Ռ. Պատկանեանը իւր՝ Նոր-Նախիջևանի բարբառով գրածների համար. ցանկալի կը լինէր, որ մեր ուսանողները, երբեմն գրոշանոց թարգմանական գրականութեան վտակը ընկնելու փոխարէն¹⁾ իրանց մալոնի բարբառով ժողովածոներ կազմէին, կենցաղավարական, առասպելարանական և արն բառերով ու դարձվածներով հարազատացնէին և հնչիւնաբանական ու քերականական ծանօթութիւններ աւելացնելով հրատարակէին կամ դիմէին հրատարակելու. Դ. Ազալեանցը, զորօրինակ, ահագին զարկ կարող է աւել, թուով է ինձ Ղարաբաղի բարբառի ուսումնասիրութեանը, եթէ իւր ուշադրութիւնը դարձնէր արդ առարկայի վերաւ. Նոյն ինքը պ. Սաղուբեանը աւելի մեծ ծառալուծիւն արած կը լինէր հալադիտութեանը, եթէ, առանց պատրաստութիւն, ժամանակ և չափող հանգամանքներ ունենալու՝ Հալերէն-Ռուսերէն բառարան կազմելու տխուր միտքը թողնէր և տար մեզ մի բառարան Ախալցխայի բարբառի. դորանով նա մի մեծ ծառալուծիւն արած կը լինէր հալկական բարբառադիտութեան ապա և լեզվի ուսումնասիրութեան. «Արդ-ձիդ — ԳԵՄԱՅԵՈՒՆ», տալիս է պ. Սաղուբեանը իւր բառարանում. Զը պատահելով արեւելեան բարբառներից ոչ միւսում, հաւանակահարար ենթադրում ենք թէ արդ բառը Ախալցխայի բարբառի պիտի լինի. իսկ ռուսերէն ԳԵՄԱՅԵ-ԳԵՄԱՅԵ-ը միտքներս ընկնելով, հասկանում ենք արդ բառի ծագումը. Ալտոնդ մարդ ակամալ երեսկալում է թէ չանկարծ մի հանաքի ուղենար Ռսերէն-Հալերէն բառարան շինել և հետեանալ բառերը գնէր իւր բառարանում:

¹⁾ Մենք սակայն արդ «գրոշանոց» կոչւած գրքերի արհամարողներից չենք:

ПѢПЪ-ПѢПЪ — հաւի ճուռ

тега-тега — սագ

хрю-хрю — խող

նման չէր լինիլ արդեօք մեր լառաջ բերած

ձիգ-ձիգ — ПЫПЛЕНОВЪ:

Ահա թէ ինչ հետեանք կարող է ունենալ բարբառների հետ անզգուշ և անհմուտ վարվելը: Եթէ ընդհանուր լեզվի բառարան կազմողը չ'օգտվի բարբառներից ահն եղանակով, ինչպէս վերեւ ասացի, ալսինքն՝ համեմատաբար և ընտրողաբար, մենք ոչինչով չենք ապահովված որ ալգայիսի բառարաններում չենք տեսնիլ այս տեսակ գաւառական կուրիօզներ՝

Ֆոքի, աղաք, իժոււմ, գանա, հըրգծկըս, ըլըպազտրակ, լըհա, մըհէկ, և այլն՝ բառեր, որոնք իրանց տեղումը (բարբառների բառարանում) շատ հետաքրքրելի են, բայց ընդհանուր լեզվի բառերի չարքումը՝ զգվելու չափ օտարոտի: Պր. Նաղուրեանը մտցնում է իւր բառարանի մէջ Ախալցխայի բառերի ձևեր և բառեր անշուշտ ոչ ահն պատճառով որ նա ալգ բարբառը մեր միւս բարբառներից աւելի գերազանց է համարում, ալ որովհետեւ, ինչպէս նա ինքը խոստովանում է՝ ալգ բարբառը, իւր մակրենին լինելով՝ աւելի ծանօթ է իրան: Բայց ալգ դեռ իրաւունք չէ տալիս պ. Նաղուրեանին ախալցխական գաւառականութիւններ մտցնել մեր լեզվի բառարանի մէջ, որը հիմնված է գլխաւորապէս արարատեան բարբառի վերայ, իսկ միւս բարբառների մասին՝ ասել թէ մեր գաւառական բարբառները (դեռ մշակված, անգամ գրի անցրած չեն)՝ Եթէ (գաւառական բարբառներ) ասելով պ. Նաղուրեանը հասկանում է երկրորդական, երրորդական բարբառները, ալսինքն՝ ալն, ինչ որ գաւառաբարբառներ (говоры, подварья) ենք անվանում, գուցէ մասամբ իրաւացի է: Բայց եթէ նա ալգ ասելով հասկանում է, որ շատ հաւանական է թվում ինձ, առհասարակ մեր բարբառները, չարաչար սխալվում է: Եթէ նա չը գիտէ որ Տփլիսի, Նրեանի (Արարատեան), Ղարաբաղի բարբառները ոչ միայն «գրի անցրած են», ալ մինչև անգամ հարուստ գրականութիւն ունին, իսկ Տփլիսինը, բացի հարուստ գրականութիւն ունենալուց՝ մի քանի անգամ հետազոտված է 3), ինչպէս և Ղարաբաղինը՝ թէև համառօտ կերպով 3), Նոյնպէս և զօկերէնը, որը թէև գրականութիւն չ'ունի, բայց հետազոտութիւններ ունի:

Ապաւէս է, ինչպէս տեսնում էք՝ բաւականին բարեւաջող գործի դրութիւնը արեւելեան բարբառների վերաբերմամբ. ոչ պակաս է նոյնը և արե-

1) Յառաջարան, Երես VI.

2) Հախվերդեան, Պետերման, Տոմսոն:

3) Паткановъ. Изслѣд. объ арм. діал.

մտեան բարբառների նկատմամբ ¹⁾։ Ուրեմն, ասել թէ՛ «գաւառական բարբառները դեռ մշակված, անգամ գրի անցրած չեն» նշանակում է տեղեկութիւն չ'ունենալ մեր գրականութեան մէջ գոյութիւն ունեցող այնպիսի մի խոշոր երեւոյթի մասին, ինչպիսին է մեր բարբառապէս գրականութիւնը։ Բայց որովհետեւ ես չեմ կարող ենթադրել որ պ. Սաղուբեանը լսած անգամ չը լինէ Սոսնոկեանցի պիեսաների մասին, Պաշեանցի վէպերի մասին, Աբովեանի «Վէրք Հալաստանի» մասին և այլն և այլն, մնում է ուրեմն կարծել թէ նորա ասածը մահանալ է միայն։ Այլ ուղղակի պ. Սաղուբեանը Ախալցխայի բարբառը՝ իբրեւ իւր մարենին՝ գործնականապէս իմանալով նրանից բառեր առել մտցրել է իւր բառարանի մէջ, իսկ միւս բարբառները, չը գիտենալով կամ շատ քիչ գիտենալով, զանցառութեան է տվել ու իրան և ուրիշներին հանգստացնելու համար ասել է թէ՛ նրանք աղեւ մշակուած, անգամ գրի անցրած չեն»։ Դորանով միայն կարելի է բացատրել որ պ. Սաղուբեանի բառարանի մէջ մտել են այնպիսի բառեր, ինչպէս ձի գ-ձի գ, վաւ, գան, գանը գաւ, գոցել (ճանապարհը գոցել), գին ովն աւ, գին ովցնել, աղուոր, աղուորն աւ (աղուորցնել-աղուորութիւն) ճանչուոր, ճանչուորն աւ (ճանչուորութիւն, ճանչուորցնել) և այլն. և միննոյն ժամանակը չը կալ ճուտ, վէր, հէր, մէր, էս, էդ, էն, էգուց և այլն, ճուտ բառը, ճմարիտ է՝ կալ, բայց նա ըստ Սաղուբեանի բառարանին նշանակում է ЖИВОТЫХЪ (ЖИВОТЫХЪ); ПТЕНЕЦЪ; աստանի ճուտ—ЧЕРТЕНОКЪ, բայց ճուտ իբրեւ հաւի ճուտ—ПЫЛХЕНОКЪ չը կալ, մինչդեռ մեր բոլոր արեւելեան բարբառներում ПЫЛХЕНОКЪ նշանակում է ճուտ և ոչ ձի գ-ձի գ ²⁾։ Յետո՛ւ մտցնելով բառարանի մէջ վաւը բառի արեւմտեան գաւառականութիւնը՝ վաւ, հեղինակը չը պիտի մոռանար տեղ տալու նորա արեւելեան կերպարանափոխութեանը վէր, ինչպէս և չը պիտի մոռանար հէր, մէր, էս, էդ, էն ձևերը, որոնք նոյն հնչիւնափոխութեան օրէնքով են լաւաջացել, ինչպէս և վէր ձևը. ալդ օրէնքն է՝ *—դ, մի օրէնք, որ մեծ ոլթ և գործադրութիւն ունի մեր արեւելեան՝ համարեա բոլոր բարբառներում. ես ասում եմ համարեա բոլոր բարբառներում, որովհետեւ նոցանից մինը՝ Աղուկեցոյ բարբառը *—այդ օրէնքին չէ ենթարկում, *— չէ փոխում է. ընդհանուր հայերէն հաւը—ազուլ. հաւը, մաւը—ազուլ. մաւը, աւթ—ազուլ. աւթ և այլն. և ոչ միայն աւ չէ փոխում, այլ անգամ պատրաստ է (այսինքն՝ ընդհա-

¹⁾ Ալաշկերտեան—Ուշիա կամ Զէլթուհ. Ար. Սեդրակեան—Քնար մեկցոյ և վանեցոյ. Գ. Սրուանձտեան—Մանանալ, Գրոց-բրոց, Համով-հոտով և այլն. Ախտամերկեան—Սիւլիւկ (==Ն. Պատկանեան). Տոմսոն—Ախալցխայի բարբառի հետազոտութիւն և այլն։

²⁾ Այդ բառը, ըստ երեւոյթին, կաղմած է ձագ բառից (= փոխած է), որը կրկնված է։

նուր հալերէնի ե-ն) լալնացնում փոխում է ա, օրինակ՝ տէր—ադ, տայր, պիտք—ադուլ, պայտք, սէր գոյականից լառաջացած բալը—ադուլ, սուրամ լամ (սիրում եմ), մինչև անգամ թրքական խեր—ադուլ, խայր ¹⁾։ Չընա-
լած ալնու ամենալնիւ իւր ալս լատկութեանը (ընդհանուր հալերէն աշ-
ադուլ, աշ և երբեմն ա, ինչպէս ցուց տվի ներքև դուրս բերած ծանօթու-
թեան մէջ) ադուլեցոց բարբառը անգամ չէ տալիս մեղ ոչ վաչր և ոչ
վար ձևը, ալ՝ հակառակ իւր ոգուն, տալիս է վէր, Պարզ է ուրեմն թէ
ինչ լալն և ընդհանուր գործածութիւն ունի վէր ձևը, Նիթէ վաչր բառի
վէր ձևը դաւառաբանութիւն էլ համարվի, դա ալնու ամենալնիւ մի ալն-
պիսի պատկառելի դաւառաբանութիւն է, որ իւր մալը ձևի (վաչր) գոր-
ծածութեան սահմանը հնացնելու չափ նվաճել է։ Էլ ինչո՞ւ մինք մեղ խա-
բենք՝ ոչ ոք մեղանից չէ ասում՝ վաչր և կ աչդ տեղից, ալ ասում
ենք՝ վէր և կ աչդ տեղից, մինչև անգամ գուցէ աւելի լաճախ՝ վէր
և կ եդ տեղից, ալսինքն՝ աչդ ձևը (ինչպէս և աչս, աչն) նոյն վիճակին
է ենթարկուած ձշմարիտ է՝ էս, էդ, էն, հէր, մէր գործածութեան ալն
ծաւալը և սահմանը չ'ունին (աչս, աչդ, աչն, հաչր, մաչր ձևերի փո-
խարէն), ինչ որ ունի վէր ձևը վաչր-ի փոխարէն, բաց և ալնպէս ալն-
քան գործածական են թէ գրականական և թէ առաւել կենդանի խօսակ-
ցական լեզվում, որ ալդ ձևերը բառարանի մէջ չը մտցնելը ցուց է տալիս
հեղինակի անուշադրութիւնը դէպի իւր գործը, եթէ ոչ, պիտի ենթադրենք
թէ նա բառարան է կազմել առանց «Մեղնից շատ առաջը»-ը անգամ
կարդացած լինելու ²⁾, կամ թէ երբէք չէ լսած ալսպիսի դարձված, ինչ-
պէս՝ հէր օրհնած ³⁾ մի դարձված, որի մէջ հէր ձևը անպալման նվա-

¹⁾ Նոյն վիճակին լաճախ ենթարկվում է և ընդհանուր հալերէնի ի, ալսինքն՝ լալնանում աշ դառնում, օրինակ՝ միտք—ադուլ, մայտք, միա—մայս, ցին—ցայն, ծիծ—ծայծ և ալն։ Մանրամասնութիւններն մէջ չ'ընկնե-
լու համար՝ հետաքրքրվողին ևս ցուց կը տամ «Ադուլեցոց բարբառը»
§ § 3, 4. իսկ ալստեղ կ'աւելացնեմ միայն որ, չը նալած իւր ալդ հատուտ
օրէնքին, ալսինքն՝ ընդհանուր հալ, աշ—ադուլ, աշ (մինչև անգամ լաճախ
ընդհ. հալ, և և ի—ադուլ, աշ), ղօկերէնը տալիս է ալնու ամենալնիւ ոչ
աչս, աչդ, աչն, ալլ (=էլ, էլի), ալլ՝ աս, ատ, ան, ալ, մի երևութ,
որ լատուկ է արևմտեան բարբառներին։ Արևմտեան տարրի ներկալու-
թիւնը ղօկերէնում մի շատ հետաքրքրական նիւթ է, որի մասին ես
կը խօսեմ մի ուրիշ անգամ։

²⁾ Ես ունեմ տանը գեղեցիկ մանեակ.

Առ, էն քեզ լինի, պարզե՛ք ինձ կեանք։

—էն առանց քեզ էլ կարող եմ տանալ։

³⁾ Ուրիշ ալդ տեսակ դարձվածներ կամ բարդութիւններ, որոնց մէջ
մտնում է հէր, մէր և ոչ հաչր, մաչր, թող մտաբերէ ընթերցողը ինքը։

ձեղ է իւր մար ձեի տեղը: Է. գ ու ց ¹⁾ բառը, պ. Սաղուբեանի համար անլատ գաւառականութիւն լինելով, նոյնպէս բաց է թողլած. մինչդեռ արալիսի արեւմտեան գաւառաբանութիւններ, ինչպէս գ ա ն, գ ա ն ը, գ ա լ, աղուոր, աղուորնալ, ելլել, ճանչուոր, ճանչուորնալ և այլն մոռացութեան չեն տրված. ի հարկէ՝ ալդ և դոցա նման բառերը կարող են մտնել մեր գրականութեան մէջ, առաւել մի ալնալիսի ուժեղ գրչի միջոցով, ինչպիսին է Գամառ-Քաթիպալի գրիչը, բաց թէ ալնու տմենալնիւ մեր զուտ արեւելեան գրական լեզվի և առաւել մեր լուսաւոր հասարակութեան կենդանի խօսակցական լեզվի նկատմամբ դոքա մնում են արեւմտեան գաւառաբանութիւններ. ամեն մէկը մեզանից կը հասկանալ ի հարկէ՝ թէ ինչ է նշանակում՝ ճանապարհը գ ո ց ե լ, բաց ինքը կ'ասէ ճանապարհը փակել. մենք իրձկանքով կարողո՞ւմ ենք Գամառ-Քաթիպալի «Նս հա՛» հալին կը ճանչնա՞մ» ²⁾ կամ «Ժուխը ամպի պէս կ'ելլէ՛ր դէպի վեր», բաց էլի մենք ինքե՛րս կ'ասէինք՝ Ժուխ է ելնում, Ժուխ կ'ելնէր և այլն. գ ի ն ո վ ն ա լ, գ ի ն ո վ ց ն ե լ բառերը եթէ պ. Սաղուբեանը լիաճնչին ձևով (գինովնալ, գինովցնել) մէջ բերէր աւելի ընդհանուր կերպարանք տված կը լինէր, և ընդհակառակը՝ մատաղահաս, աւելել բառերի կողքին չը պիտի մոռանար նոցա կարճ ձևերը՝ մատաղահաս, աւելել:

Ինձ ծուռ չը հասկանալու համար, ես պիտի ասեմ թէ՛ ես այս բանի դէմ չեմ բողոքում՝ թէ ինչու աղուոր, ելլել, գոցել, քով և այլն դոցա նման բառեր մտել են բառարանի մէջ. վերև ասացի թէ ալդ և դոցա նման բառեր կարող են մտնել և մտել էլ են մեր գրականութեան մէջ և դորանով արդէն իրաւունք են ստանում բառարանի մէջ տեղ ստանալու իմ ասելս ալն է թէ նախ՝ չը պիտի արհամարհէին կամ մոռացութեան տրվէին ալնալիսի բառեր ու ձևեր, որոնք արեւելեան գլխաւոր բարբառներին բոլորին էլ միաժամանակ չատուկ լինելով մտել են լուսաւոր հասարակութեան կենդանի խօսակցական լեզվի մէջ և ալնտեղից՝ գրականական լեզվի մէջ. երկրորդ՝ ես դէմ եմ միայն գաւառաբանութիւնների բառարանի մէջ մտնելուն, որոնք զուտ տեղալին նշանակութիւն ու բնատրութիւն ունին և ալդ պատճառով ընդհանրութեանը խորթ են. օրինակ ալնվիկ ³⁾, ձիգ-ձիգ և այլն:

Իսկապէս ընթերցողը իրաւունք ունի առաջարկելու որ այս դէպքում ես չը բաւականանամ և այլն. ով, այլ չառաջ բերեմ բոլոր գաւառա-

¹⁾ Յառաջացած ալդ (развѣтъ, утро) բառից ալ փոխելով է և ալդ նշանակութեամբ (за утра=завтра) ուրիշ ձևափոխութիւն չ'ունի:

²⁾ Գ ո ց ե լ և ճ ա ն չ ն ա լ ասենք բառերի շարքում չը կան էլ. գ ո ց ե լ պատահում ենք ճ ա ն ա պ ա Ր ի բառի տակ բերված դարձվածներում:

³⁾ Հակադէման բառարանը 2 հատ. չաւելված (Այսպիսի բառք անվկալք ի գրոց առ մեղ եղելոց) ալդ բառը բերում է ալնվիկուկ ձևով:

կան խորթութիւնները՝ որոնք տեղ են գտած բառալուծումը. բայց դա մի անպիտան առաջարկութիւն է, որը պահանջում է որ ես մեր բոլոր բարբառները, նոցա թվում եւ Ախալցխայինը, գործնականապէս խմանամ, որ ես չը գիտեմ. կամ թէ հարկաւոր է ձեռքի տակ ունենալ մի անպիտան բառարան, որ խլի մեր գրականութեան մէջ չը կալ էլ՝ համեմատական բառարան հայկական բարբառներու Այդ գործը, արկնքն՝ լառաջ բերել եւ որոշել բառարանի մէջ մտած գաւառական խորթութիւնները՝ էլի ինքը պ. Նաղուրեանը կարող է կատարել իւր բառարանը երկրորդ անգամ տպագրելու կամ աւելի ճիշդն ասած՝ իւր անլաջող բառարանը կրկին անգամ մշակելու ժամանակ. Այն ժամանակ եթէ նա արդ գաւառական խորթութիւնները դուրս գցելու չը լինի, ցանկալի կը լինէր, որ գոնեա նոցա կողքին փակագծի մէջ նշանակէր թէ ալս ինչ բառը ալս ինչ բարբառի է. Յուշանք որ արն ժամանակ չի մոռանալ նա՝ նախապաշարմունքը մի կողմ թողած, տեղ տալ իւր բառարանում մի շարք թիւք ալսան բառերի, որոնք անգամայն իկրպով մտել են մեր նոր լեզվի մէջ, օրինակ՝ դօչաղ ¹⁾, եօչաղ (գնալ, տանել), ալսըր, դարդ, հէչ, հէքաթ եւ այլն. միևնոյն ժամանակը չի մոռանալ դուրս գցելու իւր բառարանից անպիտան շինծու, արվեստական բառեր, որոնք իրանց անլաջողութեամբ ուղած գաղտնիքը չեն արտադրում. օրինակ՝

բանադատ—литературный критикъ

բանադատական—литературно-критическій

բանադատութիւն—литературная критика

բանախօս, բանախօսական, բանախօսութիւն արտոնարանութիւն բանաձև ²⁾—формула

բանաձևել—формулировать

բանաձևութիւն—формулирование, формулировка

բանամրցող ³⁾—диссертантъ

¹⁾ Դօչաղ—թէն մենք ունինք նորնանիշ՝ կարիճ, քաջ, բայց երբ մէկի արած քաջութիւնը կամ գործի լաւ կատարած լինելը ուղղում ենք գովել, ասում ենք՝ դօչաղ (եւ արդ մտքով՝ նորա արածը—դօչաղութիւն). Բռնակերէն МОЛОДЕЦЬ! (ղանաղանիւր МОЛОДЕЦЬ):

²⁾ Բանախօս, բանաձև բառերի մէջ, արտանձին առած՝ բան էլ ենք հասկանում, խօս էլ ենք հասկանում, ձև էլ ենք հասկանում, բայց սրանց միացրած ժամանակը ոչինչ որոշ եւ պարզ իմաստ չենք ստանում. (Չի կարելի սակալն չը նկատել որ բանաձև խօսքը արդէն բաւականաչափ ընդունելութիւն է գտած մեր լեզուում. Ծ. Խմբ.):

³⁾ Բանամրցող, բանամրցութիւն— диссертантъ, диссертация. Բռնակերէն ալս խօսքերը լառաջացել են լատիներէն dissero բառից, որ նշանակում է՝ մանրամասն քննել, դատել, հետազօտել եւ մրցելու հետ ոչինչ կապ չ'ունի. ուրեմն հայերէնը սխալ է կապված եւ ոչ

բանամրցութիւն — диссертация
 բառացրում — словопреие
 բնմասաց ¹⁾ — декламаторъ
 բնմասացական — декламаторскій
 բնմասացութիւն — декламация
 բանաքաղ ²⁾ — неза онно заимствующій изъ чужого сочинения
 բոլորազարդ — бордюръ
 գումարտակ — эскадронъ
 դասակ — рота
 վաշտ — бригада
 նախերգանք — увертюра
 ալգերդ — серенада ³⁾
 գեղգեղանք — флюритура և այլն.

Այդ և զոցա նման բառերը կրում են իրանց վերաջ սխալաստիկական դարբնոցի դրոշմը, ալսինքն՝ ալն ուղղութեան, որը պահանջում է որ ամեն մի գաղափար անպատճառ հալերէն բառով արտապատկի. բայց որովհետեւ լաճախ պատահում է որ մի գաղափար չալտեմու համար պակասում է նորա արտապատող բուն հակական բառը, ապա հարկաւոր է շինել մի նոր խօսք, զանազան բառեր իրար միացնելով կամ մի հին-հին բառի նոր

միայն ուզած գաղափարը չէ արտապատում, այլ բոլորովին այլ միտք է չալտում, որ ոչինչ կապ չունի dissero (диссертантъ, диссертация) բառի նշանակութեան հետ.

¹⁾ Բնմասաց (-ական, -ութիւն) պարունակելով իւր մէջ բեմ բառը, ստմանափակում է декламаторъ (-скій, ація) բառի աւելի լայն նշանակութիւնը. հալերէն վերծանող (վերծանութիւն, վերծանել), որ չը կապ. Նաղուրեանի բառարանում, թվում է ինձ՝ աւելի չարմար է ալդ իմաստը արտապատելու. Հակադեան բառարան՝ վերծանում (l. anagnosco recognosco. lego, recito) ընթեմու, որ ըստ լուն. ոճո՞ վերծանալի. որպէս թէ կարգալ իմանալով. վերծանել է ըստ ենթադատութեան, ըստ առդանութեանցն, ըստ տրոհութեան. Թ. Բ. Բ. Բ. վերծանութիւն է քերթածաց և շարագրաց անվար լառաջրերութիւն, Թ. Բ. Բ. Բ.

²⁾ Բանաքաղ բառի կազմութեան մէջ ոչ մի բան չէ ցոյց տալիս ապօրինի քաղվածք անելու միտքը.

³⁾ ալգերդ — серенада բոլորովին սխալ է. серенада բառը չառաջացել է լատիներէն serus բառից, որ նշանակում է ոչ առաւօտ կամ առաւօտեան, այլ ընդհակառէ՝ ուշ, անագան. серенада ուրեմն չէ նշանակում ալգերդ, ալսինքն՝ առաւօտեան երգ, այլ ընդհակառակը՝ երեկոյեան կամ գիշերվալ երգ. օրինակ՝

Отъ Севильи до Гренады,
 Въ тихомъ сумракѣ ночей,

Նշանակութիւն տալով, Սա չեմ ուզում ասել թէ մի նոր գաղափար չափ-
 նելու համար անպատճառ հարկաւոր է հէնց ուղղակի փոխ առնել առանց
 դէս ու դէն նախելու և ալդ չէ էլ լինում. մենք տեսնում ենք թէ ինչքան
 նոր բառեր են կազմվել և մտել հաստատվել մեր լեզվի մէջ. ալդ բառերը
 չաջող լինելով դառնել են սեպականութիւն գրականական, լուսաւոր հա-
 սարակութեան, անգամ ժողովրդական լեզվի. ալդպիսիք են՝ հիասթափ-
 վել և Երկաթ-ուղի, հեռագիր և ալն. բայց թէ մտցնել լեզվի մէջ
 բռնի կերպով ալնպիսի բառեր, որ ժողովուրդը և նորա բնազդումը չէ
 ընդունում, ալդ նշանակում է ձեր իմաստից վեր դասել և առանձին
 ջանք դործ դնել անհասկանալի լինելու համար. Անիմաստ և շինծու-կա-
 մակական բառերի թվում վիշելու է փաստ—**ФАКТЪ**, նախարար—**МИ-**
НИСТРЪ բառերը. դոցանից առաջինը՝ չը գիտեմ ինչ թիւրիմացութեամբ,
 շատերը ուզում են որ անպատճառ եւրոպական **ФАКТЪ** բառը նշանակէ.
 զոտի բան է կարծես. քանի որ փաստ նշանակել է և նշանակում է՝
 ապացոյց, պատճառ, պատճառաբանութիւն¹⁾ (որից չառա-
 ջացել է փաստաբան բառը), ինչ հարկաւորութիւն կալ աղաւաղել
 բառի իմաստը և գործածել ալնպիսի մի նշանակութեան համար, որ նա
 երբէք չէ ունեցել. պակասութիւն էք զգում **ФАКТЪ** բառի, կարելի է
 մտցնել լեզվի մէջ ալդ բառը ուղղակի ալնպէս, ինչպէս նա կալ ինչպէս
 ալդ արել են եւրոպացիք, որոնք մեզանից ոչ պակաս միջոցներ ունին
 ալդ բառը իրանց մալրենի լեզվով ունենալու և ալնու ամենալինի փոխ
 են առել. Մեր ալդ **мокромъ**-ական պուրիզմն է, որ՝ բացի վերոյի-
 շեալ օրինակներից, արտադրել է ալնպիսի մի անհեթեթութիւն, ինչպէս
 նախարար—**МИНИСТРЪ**. և սլ. Սաղութեանը ոչ միայն համաձայն է
 ալդ բառի ալդ նշանակութեանը, ալ նա ալդ բառի իսկականը չը գիտէ
 անգամ. նորա բառարանը նախարար բառի համար տալիս է միակ
 նշանակութիւն—**МИНИСТРЪ**²⁾ և ոչ մի խօսք նորա իսկական նշանա-
 կութեան համար. Փորձեցէք սպա ալդ տեսակ բառարանի օգնու-
 թեամբ թարգմանել օրինակի համար, ալնպիսի նախադասութիւնների՝
 հալոց նախարարները ջարդեցին պարսից զորքերը. նախարարները իրանց
 զնդերով օգնութեան հասան. հին Հալաստանը ունէր 900 նախարարու-
 թիւններ³⁾ և ալն.

Раздаются серенады,

Раздается стук мечей.

Գ ու մ արտակ, դասակ, վաշտ, նախերգանք, գեղգեղանք
 և ալն, իրրե տերմիններ—կամակականութիւններ են.

¹⁾ Տես Հալկադեան բառարան.

²⁾ Համապատասխան մտքով էլ՝ առաջին նախարար, նախա-
 րարութիւն և ալն.

³⁾ Նախարարութիւն, ըստ Սաղութեանի՝ **МИНИСТЕРСТВО** և մի-
 ալն **МИНИСТЕРСТВО**.

Այս բոլորէն բերած օրինակները՝ նախարար, փաստ, բնմասաց, աղ-
երդ, վաչտ և այլն բառերը կամակերպ և իմաստի ազատազուլմներ լի-
նելով, մինեւորն ժամանակը մեղանշում են «զլխաւոր նպատակի դէմ», այն
է՝ տալ բառի «հեշտ և զլխաւոր» նշանակութիւնը ¹⁾։

Բառարանի աղջ մասին դիմելուց առաջ, հարկաւոր եմ համարում
լինել նորա «բազմաթիւ պակասութեան կողմերից» երկուսն էլ. աղջ բառա-
րանի ուղղագրութիւնն է և նորա ուսանելն ընդի մէջ սպրդած անհար-
թութիւնները, անլարմարութիւնները և սխալները անդամ. Ուղղագրու-
թեան մասին մենք կը խօսենք ներքեւ քերականութեան հետ միասին.
խոյ ինչ վերաբերում է բառարանի ուսանելնին, աչքի են ընկնում լաճախ
անտեղի գործածած երկարարանութիւններ՝ кто не может, чего нельзя,
чему вѣтъ, имѣющій և այլն փոխանակ մէ՛ թող լինի բարդ՝ բառով նորն
իմաստը արտապատկերու. օրինակ՝ (անդննելի) чего нельзя распознавать
փոխ. нераспознаваемый, (անհաւատալի) чему вѣрить нельзя փոխանակ
невероятный, (անձրևաբեր) приносящій дождь, կարելի էր և՛ дожденос-
ный, (բազմապէս) знающій много փոխ. многознающій, (բազմաթիւեան)
имѣющій много крыльев փոխ. многокрылый, (գերօրինակ) чему вѣтъ
подобія, примѣра փոխ. безподобный, безпримѣрный և այլն և այլն. Ան-
լարմար է ասել (ամրապարիսպ—ս' քրօքնիկնի ստին, մի խօսքով՝ քրօ-
костный)՝ ամրապարիսպ քաղաք, բերդ—городъ, քրօքնիկնի, обнесенный
քրօքնիկնի ստին, իրր թէ՛ քրօքնիկնի, обнесенный քրօքնիկնի ստին.
այլ օրինակ—яной формы, вида, իրր թէ՛ яной вида. Խիտաժողովիւն—
предавание порокамъ. չէ կարելի ասել поклонникъ выставяте все на
показъ (ցուցամու) ինչպէս և поклонникъ взятокъ (կաշառասէր), ԻժԻ
зубы (երես 42 և 224), (երկուք) боляни при родахъ (ուղում է ասել
боляни при родахъ), вымокшійся въ крови (ս' ակելորդ է. պիտի լինի
вымокшій), նորն սխալն է և расхаживаться (փոխանակ՝ расхаживать),
անձրևաբեր—пересмѣшанный съ дождемъ (пересмѣшанный փոխանակ
перемѣшанный). սխալ է двухгривенникъ, ասում են двухгривенникъ կամ
ակելի լաճախ՝ двухгривенный. поздоровиться (բարեկ, ողջունել) փոխ.
поздороваться, (քննադրութիւն) любознательство փոխանակ любозна-
тельность ²⁾ և այլն. Կան ուրիշ շատ օրինակներ այս տեսակի. բայց ասե-

¹⁾ Յառաջարան երես VI.

²⁾ Старшенство (փոխանակ старшинство), разсыльный (փոխան.
разсылный) դուցէ և созыданіе (փոխանակ созиданіе) հաւանական է, որ
տպագրական սխալներ լինեն. ի դէպ է նկատել՝ տպագրական սխալները
նորնպէս «բազմաթիւ» են. միայն նկատված վրիպակների ցանկը չորս երես
է բռնում. աղջ վրիպակների ցանկը հէնց ինքը սկսում է սխալով՝ պէտքէ

լին թվելը աւելորդ համարելով, անցնում եմ բառարանի ազլխաւոր մասին, ալսինքն՝ այն մասին, որ հեղինակի գլխաւոր նպատակն է եղել:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՑ

(Ար չարոյնակի)

փոխանակ պէտք է (կրկնված) և տալիս է մի ծիծաղելի կուրիոզ՝ *СЪ-ЭКОНОМИТЬ* (ախալ)—(ուղղիր) *СЪ АКОНОМИТЬ* (եր. 464):

Մի ուղղագրական նկատողութիւն: Ամեն անգամ *ЪИ* հանդիպած ժամանակը չէ կարելի Ե շինել. հարկաւոր է ինչպէլ զոնեա օտար բառերը և չը գրել *безыдейный* (փոխ. *безъидейный*, տես բառարանում անգագափար բառը). առաւել որ անանուն պ. Նաղուբեանը գրում է *безъименный*: